



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» 08 2019 N 95-Ճ

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՈԼՈՐՏԻ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 14-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով N 4723-19 առ 01.08.2019 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2019թ. սեպտեմբերի 1-ից ազգային ստանդարտի կարգավիճակով գործողության մեջ դնել Ռուսաստանի Դաշնության հետևյալ ստանդարտը՝

ՀՍ ԳՕՍ Ռ 58340-2019 Կաթ և կաթնամթերք. Առևտրային դարակաշարերից նմուշառման և նմուշի լաբորատորիա հասցման մեթոդ:

2. Հայաստանի Հանրապետությունում 2019թ. սեպտեմբերի 1-ից դադարեցնել միջպետական (ԳՕՍ) ստանդարտների գործողությունը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի առաջին տեղակալ Մ. Բզնունուն:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ԲԱԲԱՅԱՆ

Հավելված 1

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ տնօրենի

« » « » 2019 թ.

N -Լ հրամանի

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործողությունը դադարեցվող ստանդարտների

| h/h | Ստանդարտի նշագիրը | Ստանդարտի անվանումը | Հիմնավորում |
|------------|--------------------------|--|--|
| 1. | ԳՕՍՍ 21-94 | Շաքարավազ. Տեխնիկական պայմաններ | փոխարենը գործում է ԳՕՍՍ 33222-2015 Սպիտակ շաքար. Տեխնիկական պայմաններ |
| 2. | ԳՕՍՍ 22-94 | Շաքար-ռաֆինադ. Տեխնիկական պայմաններ | փոխարենը գործում է ԳՕՍՍ 33222-2015 Սպիտակ շաքար. Տեխնիկական պայմաններ |